ԻԼԼԻՒՍՏՐԱՑԻՈՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԼՐԱԳԻՐԸ

—

Ռուսական առաջին լրագրի հիմնադիրը Ռուսիայի առաջին Կայսր Մեծն Պետրոսն է:

1702 թ. դեկտ. 16-ին լուսաւորիչ թագաւորը № 1921 հրովարտակով հրամայում է հիմնել Մոսկւայում մի չարաթաթերք—«Вѣдомости о воинныхъ и иныхъ дѣлахъ, достойныхъ знанія и памяти, случившихся въ Московскомъ государствѣ и въ иныхъ окрестныхъ странахъ». Ինքը Կայսրն ամենաեռանդուն աշխատակիցն ու խմբագիրն է եղել այդ լրագրի. անձամբ նշանակում է եղել հոլանդական թերթերի վրայ այն տեղեկութիւնները, որոնք անհրաժեշտ է եղել համարում թարգմանելու և տպագրելու: Մեծն Պետրոս ինքն անձամբ կարդում է եղել սրբագրութիւնը և մինչև այժմ էլ Մոսկւայի սինոդական գրադարանում մնում են Մեծ Թագաւորի ձեռքով արած «Вѣдомости»-ի սրբագրական թերթերը:



ՄԵԾՆ ՊԵՏՐՈՍ ԿԱՅՍՐ

Ռուսական առաջին լրագրի հիմնադիրը եւ խմբագիրը:

Ռուսական առաջին լրագրի ծաւալը հասարակ գրելու թղթի 1/8 երես է, № 1 ունեցել է ընդամենը 4 երես, իւրաքանչիւրը 27 տող և տողում 42 սլաւօնական տառ: Ընդամենը այդ չորս երեսներում տպագրուում են եղել տեղական, մոսկօւեան լուրերը, թղթակցութիւնները Ղազանից, Սիբիրից, Օլօնեցից: Արտաքին լուրերը՝ Լեհաստանից և մեծ մասամբ Հոլանդիայից: «Вѣдомости»-ի № 1 լոյս է տեսել 1703-ի թ. յունուարի 2-ին և հրատարակուել է իբրև չարաթաթերք: Լոյս է տեսել յունուարի 2-ին, 8-ին, 15-ին և 24-ին: Լոյս է տեսել չարաթը չորս անգամ կանոնաւոր և՛ մայիսին, յունիսին, հոկտեմբերին ու դեկտեմբերին, իսկ մնացեալ ամիսներում վատ եղանակների, ճանապարհների անկարգ հաղորդակցութեան չնորհիւ, արտասահմանեան պոստն ուշ ստացուելու և այլ հանգամանքների պատճառով, №№-ը լոյս են տեսել ամիսը երեք անգամ. 1703 թ. հրատարակուել է ընդամենը 39 համար: Մինչև 1710 թ. «Вѣдомости» տպագրուել է եկեղեցական, իսկ նրանից յետոյ կամայ-կամայ սովորական տառերով: 1711 թ. մայիսին «Вѣдомости»ն տեղափոխուել է Ս.-Պետերբուրգ, թէև մի քանի համար երբեմն տպագրուել է և՛ Մոսկւում: «Вѣдомости» տպագրուելիս է եղել 1000 օրինակ և հասը վաճառւում 2 կոպէկ:

Լուսաւորիչ Թագաւորի հիմնած այդ լրագիրն այն ժամանակ թէև չատ փոքր է եղել տարածուում, բայց այսօր նա տուել է արդէն հազարաւոր ծիլեր, ալոսներ, ճիւղաւորուել լայնատարած կայսրութեան մէջ, և այդ ճիւղերը այնքան են կենսունակ, որ հզօր սնունդ են տալիս արմատին: Այն ժամանակւայ փոքրիկ «Вѣдомости»-ի վոլսարէն այժմ 177-րդ տարին է արդէն, որ լոյս է տեսնում Պետերբուրգում համակրելի, առաջադէմ հայեացքներով, բարի իղձերով С.-Пет. Вѣд. ամենօրեայ մեծադիր լրագիրը, խմբագրութեամբ իշխան Է. Է. Ուխտոմսկու:

—

(Въ знойной степи, у истока священнаго Іордана...)

Սուրբ Յորդանանու ակունքների մօտ, տաք անապատում,
Մի ջօրէի ջերմ արևից խանձած ժայռերի գըրկում
Հանգչում է կապոյտ, հրաշալի Մեռեալ ծովըն անքարբառ.
Ամայի դաշտի հողըն անքնըքի, խոպան է իսպառ։
Դիլմական ջըրիկապոյտ երևին նայելով հեռուից՝
Սոսկում է գազան, սոսկում ու փախչում։ Տաքը վերից
Ջայնում են ահով, անիծեալ վայրից խորշում, հեռանում.
Օձեր են միայն ապրում քարերի խորը ծնդրըում։
Բեղուն միայնակ՝ նժոյգը հեծած՝ աւազոտ ափով՝
Եղևնի տէգը ձօճելով օդում՝ թռչում է թափով։
Մոռացած աշխարհն կըրում է մի չար զաղտնիքի կնիք.
Ամայի ծովի մասին պատմում են մի հին վէպ մարդիկ.
Հէնց որ վառւում են ոսկէ աստղերը պայծառ կամարում
Եւ անդրադառնում՝ ձրագների նման՝ նիրհող ջըրերում,
Հէնց որ լողում է արծաթ-լուսինը երկնում՝ կապուտակ—
Փայլո՜ւմ է յանկարծ խոնաւուտ գոգը ծովի անյատակ,
Թափանցո՜ւմ է ցած ճիւնափայլ, պայծառ խորքը շողերի,
Մակերևոյթից հասնում է խորքը հանդարտ ջըրերի,
Այնտեղ, խորքերում, գիշերային վառ երկնքի տակին,
Աւազոտ խորքում թափւած են նախկին փառքի բեկորները,
Որպէս անզգայ, անշունչ ու մնռած, ատոր դիակները...
—Ստոյ՛, Գոմո՞րն է... Ծանր, մահացու մեղքերի համար
Ջնջո՞լ է Աստուած ցեղը մարդկային, կործանո՞լ իսպառ։
Անկարող եղաւ հասկերել երկար Տէրը Երկնաւոր—
Եւ հրեղէն անձրեւ առաքեց երկիրն ցոփ ու յանցաւոր.
Պատուեց գետինն, այն քաղաքները կլանեց հիմնովին,
Իսկ պատուածքը լցւեց ջրերով աղի, ծովային...
Եւ այսօր այնտեղ, ուր երբեմն կար երկիրը քաղաքների,
Կապոյտ, անքարբառ, լուռ Մեռեալ ծովն է ծածանւում հանդարտ։

Յար. Թումանեան

ՍԻՐՈՅ ՆԱԳՆԵՐ

Թող զանգերը ղօղանջեն, ամբոխը Թող ճամբայ բանայ. Թող աստղերն ու երկինքն զմայլեն, հրճւեն։ Փողերը Թող հնչեն և Թնդանօթներն աւետիք որոտան. Թող Թմբուկ զարնեն ու պար գան. Թող սուգը վերանայ և ժպիտն ու խանդը խաղայ չուրթերին. Թող ամենքը ցնծան և հուռռա՜ կանչեն, որովհետև ես տիրել եմ ամենէն անաւրիկ բերդը, ես դերել եմ ամենէն վտանգաւոր գեղեցկուհուն։

Գ. Վ.

ԳԱՂԹԱԿԱՆԻ ՄՈՐՄՈՔԸ

—

Պայծառ օրն ընցա՜ւ, հանգաւ արեւ՛ լէ,
Հիմիկ գիշեր է—մեռո՛ւկ ու անկեա՛նք.
Է՛հ, գի՛մէ էգուց արեւ վեր կ՛ելլէ,—
Է՛լ ըն առաջուան սօիքաք ու ցրնծանք:
Վա՜խ... միենոյն մրնք իմ անճառ ու անյո՛ւս,
Զէ՛, մըր արե՛ւ լէ ուրան մէր մրտաւ.
Միենոյ մըր արեւ էլ չի՛ գար ի լուս,
Ու մըզ էլ ի՛նչ կեանք,—մըր կեանք խաւարաւ...

Դ. Նալբանդեան

ՀԱՅԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՒ ԷՈՒԹԻՒՆԸ

—

Էստէտիքան-հայակապիտութիւնը մի վարպետութիւն է, որ խօսում և զբաղւում է դեղեցկութեան հարցով: Այնպէս որ էստէտիքական զգացումը մարդուս համար նոյն նշանակութիւնն ունի, ինչ նշանակութիւն որ ունի դեղեցկութեան զգացումը, այսինքն ճաշակ դէպի դեղեցկութիւնը: Ընդհանրապէս էստէտիքապէս կրթուած և զարդացած առում ենք այն անձնաւորութեանը, որ ընդունակ է դեղեցիկ ձգտումների, ալ ամեն տեղ դեղեցիկը սիրով որոնում, ընդունում և դիտակցօրէն նրա մասին խօսում և գաղում է: Խօսել էստէտիքապէս զարդացած մարդու մասին, նշանակում է ի նկատի ունենալ այնպիսի մի անհատի, որը իր ամբողջ էութեամբ, նիստ ու կացով, խօսակցութեամբ, հագուստով, տնային կահաւորութեամբ, զարդարանքներով և այլ կողմերով էստէտիքական զգացմունքի մէջ է գտնուում: Էստէտիքապէս կրթուած մարդը, կամ աւելի լաւ է ասել էստէտիքական զգացմունք ունեցողը ամեն տեղ և ամեն ժամանակ աշխատում է իրան հեռու պահել տգեղ, տեղի և աններդաշնակ երևոյթներից. ճաշակ, հասկացողութիւն դէպի դեղարուեստական դեղեցկութիւնը, և ընդունակութիւն դէպի դեղարուեստական աշխատանքները միայն այն մարդիկը կարող են ունենալ, որոնք էստէտիքապէս զարդացած են և որոնց աշխարհայեացողութիւնը լի է այդպիսի դեղարուեստական մտապատկերներով:

Ասպէս հետևեալք իրանց ամբողջ էութեամբ ընդհանուր մարդկութեան առաջ հանդիսանում են որպէս յատուկ և գլխաւոր էստէտիքապէս կրթուած ժողովուրդ, ազգ: Ըընայելով երկար դարեր արդէն անցել են, բայց և այսօր էլ նրանց դեղարուեստական բոլոր աշխատանքները համարւում են բոլոր ազգերի համար որպէս նորմ, կանոն, օրինակ նրանց կեանքը, ընտանեկան կազմակերպութիւնը, նիստ ու կացը, սովորութիւնները, հագնելը, մանդալը, խօսելը, գրելը, մի խօսքով նրանց ամբողջ նկարչին և արտաքին կեանքը, մարմնական կրթութիւնը, հասարակական յոնները, երաժշտութիւնը, նկարչական մեծ ընդունակութիւնները: Բոլորն էլ ցոյց են տալիս, որ նրանք էստէտիքապէս կրթուած զարդացած ազգ են եղել: Ահա անցել են երկար դարեր և դեռ մինչև օրս էլ նրանց բարձր դեղարուեստական ոգին թագաւորում է բոլոր ազգերի վրայ և նայողին մեծ զարմանք և խորին ապշութիւն է պատճառում:

Ինչպէս որ կենդանի կրօնական զգացումը, կեանքը, մտածողութիւնը և ձգտումը ամեն մի մարդու համար անհրաժեշտ է, այնպէս էլ ամեն մի փոքր ի չատէ կրթուած և զարդացած մարդու համար էստէտիքական կրթութիւնն է անհրաժեշտ: Հոգիբանութեան չրջանում մենք տեսնում ենք էստէտիկան կրօնական-բարոյական զգացմունքի հետ մի բաժնում զետեղած: Այդ զգացումներից իւրաքանչիւրը իրանց սահմանում միմեանց օգնում են: Մենք բարոյական զգացման օրէնքների սահմանում առաքինութեան, սիրոյ, հոգացողութեան, ազնուութեան և անաղնուութեան սկզբունքներով պէտք է աշխատենք առնչութեան, մանաւոր սեռականութեան, մերձաւորի կեանքի և գոյքի վրայ աւելի մարդկային գեղեցիկ և սուրբ յայտութիւններով նայելու: Այնպէս որ էստէտիքական զգացումը բարոյականի համար ծառայում է որպէս նախադուռ:

Ով որ անհոգութեամբ է նայում մաքրութեան, զանազան տեղեկութիւնների հաղորդման, մարդկանց ապնութեան և այլ գործողութիւնների վրայ, այդպիսի անհատը պարզ ցոյց է տալիս, որ ինքը բարոյականութիւնից զուրկ է: Բնութեան մէջ ինչպէս որ էստէտիքական զգացմունքը, նոյնպէս բարոյականը միահամուռ ոյժերով ձգտում են մարդուն ազատել կենդանական անբան ամուր կապից և նրան բերելով կանոնաւոր կեանքի մէջ պիտանի դարձնել իր նմաններին և ուրիշների համար: Եւ այսպէս մի հասարակութեան, մի ժողովրդի իսկական կրթութիւնը, հասկացողութիւնը չափելու համար մենք անպատճառ պէտք է ի նկատի ունենանք թէ այդ ժողովրդի կամ հասարակութեան բոլոր անդամները արդեօք իրանց բոլոր հակումներով, կեանքով, ձգտումներով և իրանց գործերի բոլոր կողմերով աշխատում են գեղարուեստապէս առաջ գնալ, զարդանալ և բարոյապէս վերականգնել: Էստէտիքական ոգով կրթուած անհատը պատրաստ է և աշխատում է իրան բարձր պահելով ստեղծել այն բոլոր գործառոր միջոցները, որոնք անհրաժեշտ են բարոյական աղեկութիւնների և տգեղանութիւնների վերացման համար: Ամենաուրեք էստէտիքական կրթութիւնը, դգացումը իր ամբողջ էութեամբ հետևում միշտ բարոյականին օգնող և պաշտպանող է հանդիսանում. Եւ երբ մենք մի ժողովրդի ֆիզիքական, կրօնական, բարոյական կրթութեան մասին խօսելու լինենք, անչուշտ պէտք է աչքի առաջ ունենանք նրա էստէտիքական կողմը:

Մենք կրթութեան և դաստիարակութեան առաջնորդութեամբ ոչ թէ միայն մեզ տէր ենք դարձնում մեր մարմնին, որ մարմինը և հոգին միմեանց հետ ներդաշնակութեան մէջ լինեն, այլ պարտաւոր ենք իսկական մարդ լինել և մեր ամբողջութեամբ ձգտենք հասնելու վեհին, գեղեցկին, դաստիարակականին: Նախ և առաջ անհրաժեշտ է պիտանի անհատներ պատրաստել և ապա կրօնական, բարոյական կրթութեան միջոցով ճշմարիտ կրօնը նրանց հոգու և սրտի մէջ մտցնելով տանել ընդհանուր մարդկային բէական դիտութիւնների քարոզած ճանապարհով և յետոյ բարձրացնել նրանց էստէտիքական կրթութիւնը: Էստէտիքական կրթութեամբ ամեն մի անհատ հոգի է ստանում և լուրջ ուշք դարձնում իր խօսակցութեան, կարդալու ատոդանութեան, ճաշակով մաքուր ղեկատ-

Փայտե ձիու վրա նստած մարդ



Փայտե ձիու վրա նստած մարդը հին ժամանակներում կենցաղում ունեցել է մեծ նշանակություն:



Դանդաղ փոխադրում մի մեծ փայտե տան

ների, տնային իրերի գեղեցկութեան, մաքրութեան, կարգի, զանազան քաղաքավարական ձևերի... և զարհուրանքով վրայ. սէրէ տածում դէպի նկարչութիւնը, գծագրութիւնը, երաժշտութիւնը, երգեցողութիւնը և ցանկանում է ծանօթանալ գեղարուեստից պատմութեան հետ:

Որոշ ժողովուրդներ և ազգեր, որոնք իրանց հրկրի աչխարհագրական դիրքի և այլ պայմանների ու յարաբերութեանց պատճառով պտնուում են յատիտնական անչարժութեան, անկենդանութեան մէջ և կուրօրէն կապւած են իրանց հին ձևերի, կարգերի, սովորութիւնների, նիստ ու կացի հետ, որոնք միևնոյն ժամանակ հեռու լինելով քաղաքակրթութեան զօրեղ լուսաւիքից, նոյն նահապետական դրութեան մէջն են, զուրկ են միանգամայն գեղարուեստական իրեր կամ գործեր տեսնելու բաղդից: Այդպիսիները նոյն իսկ չունեն մի սրտացաւ առաջնորդ, որ իրանց նիստ ու կացը, այդինների և երկրի մշակութեան եղանակը, տների կարգը կարողանայ կանոնաւորել, և մաքրութեան կանոնները սովորեցնելով դիտել տալ իրանց չքնաղատող հրաչալի բնութիւնը:

Մի կողմից տգիտութիւնը, միւս կողմից կանոնաւոր հաղորդակցութիւններից զուրկ լինելը վնասում է այդպիսի ժողովրդի աչքերը աւելի հեռուն տեսնելու, լաւը, գեղեցիկը և բարին իմանալու, իսկ վատը, վնասակարը դէպի հեռուն վանելու:

Էստէտիկական կրթութիւնը մարդս ստանում է ծնողական օջախում և դպրոցում:

Ընտանիքներում էստէտիկական կրթութիւնը կարելի է հետևեալ միջոցներով առաջ տանել և կատարելագործել. առաջին՝ ծնողների բարի օրինակը դէպի լաւ կրթութիւնը, բարոյական սովորութիւններ, չափաւորութիւն մարմնական զարհուրանքների, կերակրի, խօսակցութեան, մաքրութեան. կարգ բնակութեան բոլոր տեղերում—սան կահաւորութեան, սենեակների զարդարանքների, սեպհական մարմնի կանոնաւոր զարգացման, ծաղիկների՝ աճեցման: Խնամքով առաջ բերել փոքրիկ ճաշակով ծաղկոցներ, պարտէզներ. ձեռքի աշխատանքների վրայ ուշք դարձնել, որ մաքուր, գեղեցիկ, սիրուն և կանոնաւոր լինեն... Իսկ դպրոցում էստէտիկական կրթութիւնը տեսի է ունենում ընդհանրապէս հետևեալ միջոցներով: Դպրոցական չինութիւնը կատարեալ մաքրութեան մէջ պահելով ուշք դարձնել, որ սենեակները ճաշակով գեղեցիկ զարդարեն: Նախահանեակները օրինաւոր իստակութեան, կանոնաւորութեան մէջ պահելով ծաղկամաններ դասել այս կամ այն կողմը. բակը, այդին լիսա կարգապահութեան մէջ դնել: Շքնղ, սիրուն կահաւորել, զարդարել դահլիճը, ուսուցչական ու հիւրեր ընդունելու սենեակները:

Դպրոցը խնամք ու ջանք պէտք է գործ դնի մայրենի լեզւի կանոնաւոր առոգանութեան, կրօնի և միւս առարկաների կանոնաւոր ուսանդման վրայ. կատարեալ ուշք պէտք է դարձնի ձևաւոր ու կարդին մաքուր խօսակցութեան, սիրուն նկարչութեան, վայելուչ գրութեան, գծագրութեան և ձևակերպումն ընդօրինակման, որին պէտք է միացած լինի գեղարուեստական պատմութեան էպիզոդներ: Կանոնաւոր վորձեր կրօնական, ժողովրդական և ազգային երգերի, մարմնամարզութիւն, պարեր, նկարագրութիւններ, դասական պիտոյքների կատարեալ և խստիւ կանոնաւորութիւն: Աւելի ուշք պէտք է դարձնել գեղարուեստի պատմութեան և դրականութեան վրայ: Եւ երբեմն-երբեմն տեղի պիտի ունենան աչակերտական զրօսանքներ... Այս բոլոր միջոցներով դրպրոցը ոչ թէ միայն դիտութիւն է տալիս աչակերտներին, այլ կատարեալ մարդ է կրթում և պիտանի անդամ պատրաստում: Ուրիմն դպրոցները էստէտիկապէս կանոնաւորելով կարելի է դրանով աչակերտի միտքն ու հոգին բանալ և ցոյց տալ՝ որն է օգտաւէտը, գեղեցիկը, ցանկալին և սիրունը: Ոչ թէ միայն բնակարանների նկատմամբ կարելի է էստէտիկապէս զարդարել, գեղեցկացնել, այլ և դուրսը: Օրինակ քաղաքները կարելի է էստէտիկապէս կանոնաւորել իր կարգին և մաքուր վաղոցներով, սիրուն զարդարւած հրապարակներով, ծաղկոցներով, այգիներով և ճաշակով և ճարտարապետական նկատմամբ կառուցած չքնղ շինութիւններով: Իսկ նկեղեցիները իրանց էստէտիկական գործը կարող են յաջողութեամբ, պարզ ու գեղեցիկ ընթերցմանքներով, նկատմանակ երգեցիկ խմբեր կազմելով և արտաքուստ ու նկատմամբ մաքուր, պայծառ և սիրուն պահելով:

Ձ Մ Ե Ռ

Իսկ թէ որքան է մի ժողովուրդ, մի ազգ առաջ գնացել կրթութեան և գեղարուեստի մէջ, այդ կարելի է իմանալ նրա քաղաքներում դոյութիւն ունեցող գեղարուեստական հատաքածուներով և սկսպէս հնութիւններով, որոնք բացի այն, որ իրանց նկրութեամբ, գեղեցկութեամբ այցե-

Եդեսիայի վանքը

լուներին հոգևկան զարգացութիւնները և բարեկանութիւնները են պատճառում, այլ և հարստացնում, լայնացնում են նրանց մտաւոր հորիզոնը և էստետիքային կրթում, դաստիարակում են:

Աբգար Բահանեան.

ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ԳԻՒՂԻՈՑ Ս. ՍԱՐԳԻՍ ՎԱՆՔԻ ՈՐԲԱՆՈՑԸ

—

Հինգ տարի սրանից առաջ Նախիջևանի և Օստովի հայերից ոմանք հետևելով հանգուցեալ Գրիգոր Զանչեանի, Մոսկուայում կազմ. Ժամհարեան հայերի օրինակին, միտք յղացան ինքեանք ևս մի որբանոց պահել տաճկահայ որբերի համար, որտեղ որ յարմար համարի, ըստ բարեհայեցողութեան Կ. Պոլսի Սրբազան Պատրիարքի: Որոշեցաւ որբանոցի տեղ Տաճկաստանի Եդեսիա քաղաքի Ս. Սարգիս Վանքը, իսկ պահուելիք որբերի թիւը 50, որի համար և ձեռնարկեցաւ գործին ու սիրայօժար կամքով հայթհայթեցաւ հարկաւոր նիւթական միջոցները: Արդէն լրացաւ չորս տարով բացած այդ որբանոցի ժամանակամիջոցը, և դա էլ միւսների նման կամ պիտի իսպառ փակւի և կամ վոխարկւի արհեստանոցի, համաձայն Սրբազան Պատրիարքի այն չրջաբերականին, որ հրատարակեցաւ ու տարածեցաւ ամեն տեղ: Պատկերները, որոնցից մէկը ներկայացնում է Եդեսիոյ Ս. Սարգիս վանքը, իսկ միւսը որբերի խմբական պատկերը, լուսանկարուած է միակ օրինակից, որ պատրիարքարանն ուղարկել է որբախնամներին ի յիշատակ:

Ս. Շահազիզ.

ՏԱՓԱԿ ԶՐՈՑՑՆԵՐ.

—

Ծաբեխանուէ.—Տօնում էին մէկի յոբելեանը. լինում էին շատ ճառեր, կենացներ և բարեմաղթութիւններ: Վերջում կանգնում է ստորին ծառայողը և ասում.

—Պարոններ, թոյլ տուէք մի խօսք.

—Ես-սես· լսեցէք:

—Ուրեմն, սիրելի կառավարիչ, ինչ ենք մենք. մենք անասունները ենք, ոչխարներ, անլեզու կենդանիները, խոզեր...

Բրավօ, բրավօ:

—Իսկ դուք ոչ թէ մեր կառավարիչն էք, այլ մեր հարազատ հայրը...

—Ուռա՜,ուռա՜, ուռա՜:

Անդագրութիւն.—Հայրիկ, ինչպէս գրել հարիւր, հ-ռիւ, թէ յ-ով:

—Հարիւր ինչ.

—Կոպէկ:

—Պէտք է ուղղակի գրել մի ռուբլի:

Լ.

Եդեսիայի որբանոցի աշակերտները

ՄՏՔԵՐ ԿԵԱՆՔԻ ԵՒ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍԻՆ.

(Մ. Գօրկիի)

—

Կեանքը—այդ մեռած մարմին է, որի վրայ ինչպէս կուզես վերցրու, պատռիր, կտրիր, նա ձայն չի հանիլ: Բայց կեանք—հէնց որ մի ոսկի քայլ արիր նրա վրայ, անկանոն կերպով տեղ բռնեցիր նրա մէջ քեզ համար թէ չէ, մէկ էլ տեսար հազարաւոր ձայներ պատում են քեզ վրայ, այլ և զարկում, զլխիդ բոմբում:

—

Կեանքը խառնում է մեզ, որպէս խաղաթղթեր, և միայն պատահաբար, և այն էլ ոչ երկար ժամանակով, մենք ընկնում ենք մեր տեղը:

—

Կեանքի իմաստը գեղեցկութեան և նպատակներին ձգտելու ուժի մէջ է, և պէտք է որ կեանքի իւրաքանչիւր մի վայրկեանը ունենայ իր վսեմ դիտաւորութիւնը:

—

Եթէ որ կեանքն, իր բոլոր միաւորութիւններով դառնար ամբողջապէս մի կրքոտիկական վայրկեան, եթէ որ ամեն մի ակնթարթ մարդս հարկադրուած լինէր դողալու իր դոգրայի ամբողջութեան պահպանման համար... Աստուած վկայ, կեանքն առաւել՝ հետաքրքիր կը լինէր:

—

Իւրաքանչիւր մարդ է յիմար և խարդախ—յիմարը նրա զգայմունք է, իսկ խարդախը միտքը:

—

Մի հաւատաք մարդուն: Որովհետև միշտ, երբ նա պատմում է ինքն իր մասին, սուտ է: Եթէ դժբախտ է, որպէսզի դէպի ինքն աւելի կարեկցութիւն յարուցանէ, եթէ բախտաւոր—որպէսզի իրան աւելի նախանձեն, յամենայն դէպս—որպէսզի աւելի ուշադրութիւն դրաւէ:

Թարգմ. Գավ. Սահիանեան

ՀՆՈՒՄԸ ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐԻՆ ՎԵՐԱԳՐՈՒԱԾ ԱՌՈՂՋԱՐԱՐ ՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Հին ժամանակներում նապաստակն ըստ ինքեան ներկայացնում էր չորս ոտքերի վրայ չրջող մի դեղաուն: Նրա մարմնի համարեա բոլոր մասերն այսպէս թէ այնպէս գործադրուում էին բժշկութիւն կատարելու համար, ամեն մի մասին վերագրուում էին առողջարար յատկութիւններ, առաւելապէս 16 և 17 դարերում, երբ գիտութեան մէջ թագաւորում էր սնապարծութիւնը:

Մեծ գործածութեան մէջ էր նապաստակի թարմ լեղին մեղրի հետ խլութեան դէմ, իսկ օղիի հետ խառնած լեղին ծառայում էր ինչպէս քնարեր մէջոց, երբ քսում էին քունքերին. նապաստակի ուղեղով էլ չըփում էին փոքրիկ երեխաների լընդերքը, ատամների դուրս գալը հեչտացնելու համար:



Ս. Գիրքը XII-րդ դարում:

Վիլհելմ II գերմանացոց կայսր

Կարմիր քամու դէմ գործ էին ածւում ինչպէս խիստ ներգործող միջոց՝ քաթանի կտորները, որոնք թրջւած էին լինում մայիսին սպանւած նապաստակի ալ կարմիր արիւնով։ Դեռ 1652 թ. Կերմանիայի դեղատներում կարելի էր գնել «Նապաստակի արիւնոս բաժկիճակներ»։

Ամենից ահեղի գործադրութիւն էին գտնում նապաստակի մազերը, որ գործ էին ածում գնդակների պէս կլորած՝ քթի արիւնհոսութեան դէմ, ինչպէս տաքացնող ջուրը ոտերի սառչելու դէմ, խառնում էին մեղրով ջրի մէջ, ինչպէս դեղահատեր ճեղուածքի (грижа) դէմ։

Բացի դրանից նոյնպէս գործ էր ածւում ականջների ներքնի մակերեսոյթից թարմ մաշկած կաշին, թրջւած կաթով, ինչպէս կոմպրեսս հիւանդ աչքերի վրայ, իսկ ամբողջ ականջը, մոխիր դարձրած, գործադրւում էր արիւնահոսութիւնը դադարեցնելու համար։ Վերջին նպատակի համար գործ էր ածւում նոյնպէս նապաստակի այրած գանգը, որից պատրաստում էին ատամի փոշի եւս։

Խմբագիր-Հրատարակիչ՝
Տիգրան Նազարեանց

Անդիջանի ճանապարհին

Дозв. ценз. Тифлисъ, 17 января, 1903 г. Тип. т—ва «Вереичевъ и Каменмахеръ», Михайл. пр. № 81. Телеф. № 852.
Տպարան ընկ. «Վերելիչ և Կամենմախեր», Միքայելեան պրոսպ. № 81. Տելեֆօն № 852.